

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՋԵՐՄԱՅԻՉԻՒՄ ԸՆԵՔԵՐԻ ՊԱՏՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ
СТРОИТЕЛЬНАЯ ТЕПЛОФИЗИКА ОГРАЖДАЮЩИХ КОНСТРУКЦИЙ ЗДАНИЙ
BUILDING THERMOPHYSICS OF FENCING CONSTRUCTIONS

Գործարկման քվակաճը 1996-02-01

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Շինարարական ջերմաֆիզիկայի առյճ նորմերը պետք է պահպանվեն ներսի օդի նորմավորված ջերմաստիճանով, տարբեր նշանակության նոր եւ վերակառուցվող շենքերի (բնակելի, հասարակական, արդյունաբերական.) պատող կոնստրուկցիաներ (արտաքին եւ ներքին պատեր, ձեղնահարկային եւ միջհարկային ծածկեր, հատակներ, լուսանոսներ, երդիկներ, դռներ, դարպասներ եւ այլն) նախագծելիս:

1.2 Չմասնը ջերմային կորուստները, իսկ անմասնը ջերմության ներքափանցումները փոքրացնելու նպատակով շենքեր նախագծելիս անհրաժեշտ է նախատեսել՝

ա) ծավալահատակագծային լուծումներ, որոնք ապահովում են պատող կոնստրուկցիաների հնարավոր նվազագույն մակերեսները,

բ) կոնստրուկտիվ-հատակագծային լուծումներ, ինչպես նաեւ լուսային բացվածքների կոնստրուկցիաներ եւ մակերեսներ, որոնք նպաստում են ցուրտ ժամանակահատվածում արեւի էներգիայի առավելագույն կուտակմանը,

գ) ձմռանը լուսային բացվածքներում օդի լրացուցիչ փակ շերտի ստեղծման հնարավորությունը (լրացուցիչ ապակեպատ շրջանակների, պոլիվինիլքլորիդային կամ պոլիէթիլենային բաղաճրների, փայտյա ծածկափեղկերի տեղադրում եւ այլն),

դ) բացվացքների ձեղքերի, ինչպես նաեւ արտաքին պատերի եւ ծածկերի տարրերի կցորդումների քփացում,

ե) էֆեկտիվ ջերմամեկուսիչ նյութերի ուսցիոնալ օգտագործում:

1.3 Անհրաժեշտ է նախատեսել պատերի արտաքին մակերեսների պաշտպանությունը մթնոլորտային խոնավությունից՝ երեսապատման, սփառելու, ջրակայուն խառնուրդներով ներկելու եւ այլ միջոցներով:

1.4 Բնակելի շենքերում, բուժ-պրոֆիլակտիկ եւ մանկական հաստատություններում, դպրոցներում եւ գիշերօթիկներում անհրաժեշտ է նախատեսել ենթատանիքային տարածքի (ձեղնահարկի) բնական օդափոխությամբ կտորներ:

1.5 Մենքերի խոնավային ռեժիմը ձմռանը, կախված ներսի օդի ջերմաստիճանից եւ հարաբերական խոնավությունից, որոշվում է աղ. 1-ից: ՀՀ տարածքի բաժանումը խոնավության գոտիների ընդունել ըստ հավելված 1-ի:

Պատող կոնստրուկցիաների շահագործման

Պաշտոնական հրատարակություն

պայմանները, կախված սենքի խոնավային ռեժիմից եւ ըստ կառուցման վայրի խոնավության գոտու պատկանելության, որոշվում է ըստ հավելված 2-ի: 8

Աղյուսակ 1

Ռեժիմը	Ներսի օդի խոնավությունը %, ջերմաստիճանի տվյալ սահմաններում		
	մինչեւ 12°C	12-ից մինչեւ 24°C	24°C-ից բարձր
Չոր	մինչեւ 60	մինչեւ 50	մինչեւ 40
Նորմալ	60-ից մինչեւ 75	50-ից մինչեւ 60	40-ից մինչեւ 50
Խոնավ	75-ից բարձր	60-ից մինչեւ 75	50-ից մինչեւ 60
Թաց	---	75-ից բարձր	60-ից բարձր

1.6 Խոնավ եւ քաց ռեժիմով սենքերի արտաքին պատող կոնստրուկցիաներում (պատեր, կտորներ, ծածկեր) անհրաժեշտ է նախատեսել օդափոխվող օդային միջնաշերտեր:

Պատերի հաճախակի անմիջական խոնավացման դեպքում արտադրական կամ կենցաղային խոնավությամբ, անհրաժեշտ է նախատեսել բոլոր ներքին մակերեսների պաշտպանություն խոնավության ազդեցությունից, անկախ սենքի խոնավության ռեժիմից:

1.7 Չոր եւ նորմալ ռեժիմով սենքերի արտաքին պատերում բույլատրվում է նախատեսել օդափոխվող եւ չօդափոխվող (փակ) օդային միջնաշերտեր, ընդ որում, նրանց բարձրությունը չպետք է գերազանցի հարկի բարձրությանը կամ 6 մ:

1.8 Ներսի օդի նորմավորված ջերմաստիճանով սենքերի հողի վրա տեղադրված հատակները, որոնց խորությունը գետնի մակերեսից ափել չէ քան 0,5 մ, արտաքին պատի մոտ պետք է ենթարկվեն ջերմամեկուսացման, հողի վրա փռած անօրգանական, խոնավակայուն ջերմամեկուսիչ նյութի շերտով: Ջերմամեկուսացման գոտու լայնությունը, հաշված արտաքին պատից, պետք է կազմի 0,8 մ, իսկ հաստությունը որոշվում է պայմանից, որ մեկուսիչ շերտի ջերմային դիմադրությունը փոքր չլինի արտաքին պատի ջերմային դիմադրությունից: 1

2 ՊԱՏՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՋԵՐՄԱՓՈԽԱՆՑՄԱՆ ԴԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Բոլոր տիպի արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման դիմադրությունը R_0 , (բացառությամբ ջերմահաղորդիչ ներառումներ պարունակող տեղամասերի ըստ 2.12-ի) պետք է լինի ոչ պակաս տնտեսապես շահավետ ջերմափոխանցման դիմադրությունից՝ $R_0^{տնտ}$, եւ սանիտարահիգիենիկ պահանջներից որոշված ջերմափոխանցման դիմադրությունից՝ $R_0^{սան}$:

Կարծատե շահագործման համար նախատեսված 12°C ու ցածր ներքին օդի ջերմաստիճանով շենքերի արտաքին, ինչպես նաև սենյակները բաժանող ներքին կոնստրուկցիաների համար, եթե այդ սենյակների ջերմաստիճանների տարբերությունը գերազանցում է 6°C , թույլատրվում է ջերմափոխանցման դիմադրությունը ընդունել ոչ պակաս սանիտարահիգիենիկ պահանջներից որոշված ջերմափոխանցման դիմադրությունից՝ $R_0^{տնտ}$:

2.2 Պատող կոնստրուկցիաների հարք եւ խուլ (չօդափոխվող) տեղամասերի ջերմափոխանցման դիմադրությունը՝ R_0 , $\text{մ}^2\cdot^{\circ}\text{C}/\text{Վտ}$, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_0 = \frac{1}{\alpha_0} + R_{\Sigma} + \frac{1}{\alpha_n} \quad (1)$$

որտեղ՝ α_0 - կոնստրուկցիայի ներքին մակերեսային ջերմատվության գործակիցն է, $\text{Վտ}/(\text{մ}^2\cdot^{\circ}\text{C})$ (տաղ. 2),

α_n - պատող կոնստրուկցիայի արտաքին մակերեսային ջերմատվության գործակիցն է, $\text{Վտ}/(\text{մ}^2\cdot^{\circ}\text{C})$ (տաղ. 3),

R_{Σ} - պատող կոնստրուկցիայի ջերմային դիմադրությունն է, որը որոշվում է 2.3 եւ 2.4-ի համապատասխան:

Ներքին պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման դիմադրությունը որոշվիս, որպես արտաքին մակերեսային ջերմատվության α_0 գործակից ընդունվում է α_0 որոշված ավելի սառը սենյակի համար:

Աղյուսակ 2

Պատող կոնստրուկցիայի ներքին մակերեսային	Ջերմատվության գործակիցը, α_0 , $\text{Վտ}/(\text{մ}^2\cdot^{\circ}\text{C})$
1 Պատեր, հատակներ, հարք առաստաղներ, կողավոր առաստաղներ, երբ կողի հ բարձրության հարաբերությունը կողերի միաստի միջև եղած a հեռավորությանը՝ $\frac{h}{a} \leq 0,3$	8,7
2 Կողավոր առաստաղներ, երբ $\frac{h}{a} > 0,3$	7,6
3 Երդիկներ	9,9

Աղյուսակ 3

Պատող կոնստրուկցիայի արտաքին մակերեսային	Ջերմատվության գործակիցը, α_n , $\text{Վտ}/(\text{մ}^2\cdot^{\circ}\text{C})$
1 Արտաքին պատեր, կտուրներ, սնցումների վրայի ծածկեր	23
2 Դրսի օդի հետ հաղորդակցվող սառը նկուղների ծածկեր	17
3 Չեղմահարկերի եւ լուսային բացվածքներով պատերով չջեռուցվող նկուղների ծածկեր, ինչպես նաև օդափոխվող օդային միջնաշերտով արտաքին պատեր	12
4 Լուսային բացվածքներ չունեցող եւ չջեռուցվող նկուղների, գետնից վերեւ տեղադրված, եւ չջեռուցվող տեխնիկական ներքնահարկերի, գետնից ներքեւ տեղադրված, ծածկեր	6

2.3 Հաշորդական տեղադրված համատեղ շերտերով պատող կոնստրուկցիայի ջերմային դիմադրությունը՝ R_{Σ} , $\text{մ}^2\cdot^{\circ}\text{C}/\text{Վտ}$, որոշվում է որպես առանձին շերտերի ջերմային դիմադրությունների գումար՝

$$R_{\Sigma} = R_1 + R_2 + \dots + R_n \quad (2)$$

որտեղ R_1, R_2, \dots, R_n - առանձին շերտերի ջերմային դիմադրություններն են,

$\text{մ}^2\cdot^{\circ}\text{C}/\text{Վտ}$, որոնք որոշվում են 2.4 -ի համապատասխան:

Փսկ օդային միջնաշերտի ջերմային դիմադրությունը որոշվում է տաղ. 4-ից:

Օ ա ն ո թ ո թ յ ո ն: Պատող կոնստրուկցիայի օդափոխվող օդային միջնաշերտ պարունակող տեղամասերի համար պետք է հաշվի առնել միայն այն շերտերի դիմադրությունը, որոնք գտնվում են օդային միջնաշերտի եւ կոնստրուկցիայի ներքին մակերեսային միջև:

2.4 Բազմաշերտ պատող կոնստրուկցիայի առանձին շերտերի, կամ միաշերտ պատող կոնստրուկցիայի ջերմային դիմադրությունը, $\text{մ}^2\cdot^{\circ}\text{C}/\text{Վտ}$, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R = \frac{\delta}{\lambda} \quad (3)$$

որտեղ՝ δ - շերտի հաստությունն է, մ,

λ - շերտի նյութի ջերմահաղորդականության գործակիցի հաշվարկային արժեքն է, $\text{Վտ}/(\text{մ}\cdot^{\circ}\text{C})$, որն ընտրվում է ըստ հավելված 3-ի:

2.5 Անհամատեղ շերտերով պատող կոնստրուկցիայի (բացառությամբ ջերմային ներառումներ պարունակող տեղամասերի ըստ 2.12-ի) բերված ջերմային դիմադրությունը՝ R_{Σ} , $\text{մ}^2\cdot^{\circ}\text{C}/\text{Վտ}$, հաշվվում է հետևյալ մոտավոր եղանակով՝

ա) ջերմային հոսքի ուղղությանը զուգահեռ հարթություններով պատող կոնստրուկցիան (կամ նրա մի մասը) պայմանականորեն բաժանվում է

համաստեղ շերտերով տեղամասերի եւ կոնստրուկցիայի ջերմային դիմադրությունը՝ R_w , որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_w = \frac{F_1 + F_2 + \dots + F_n}{\frac{F_1}{R_1} + \frac{F_2}{R_2} + \dots + \frac{F_n}{R_n}} \quad (4)$$

որտեղ՝ F_1, F_2, \dots, F_n - կոնստրուկցիայի առանձին տեղամասերի մակերեսներն են, m^2 ,

R_1, R_2, \dots, R_n - նշված տեղամասերի ջերմային դիմադրություններն են, որոնք որոշվում են նսձևով:

(2) բա-

բ) ջերմային հոսքի ուղղությամբ ուղղահասց հարրություններով պատող կոնստրուկցիան (կամ նրա մասը, որը ընդունված է R_w -ն որոշելու համար) պայմանականորեն բաժանվում է շերտերի, որոնց մի մասը կարող է լինել համաստեղ (մի նյութից), իսկ մյուս մասը՝ անհամաստեղ (տարբեր նյութերից կազմված միաշերտ հատվածներով): Համաստեղ շերտերի ջերմային դիմադրությունը որոշվում է (3) բանաձևով, անհամաստեղ շերտերիին՝ (4) բանաձևով, իսկ պատող կոնստրուկցիայի R_F ջերմային դիմադրությունը, որպես համաստեղ եւ անհամաստեղ շերտերի ջերմային դիմադրությունների գումար, (2) բանաձևով:

Կոնստրուկցիայի բերված ջերմային դիմադրությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_{Fq}^F = \frac{R_w + 2R_F}{3} \quad (5)$$

Աղյուսակ 4

Օդի շերտի հաստությունը, մ	Փակ օդային միջնաշերտի ջերմային դիմադրությունը, $m^2 \cdot ^\circ C / \text{վտ}$			
	Ուղղահիգ եւ հորիզոնական, երբ ջերմային հոսքը ուղղված է ներքեւից - վերեւ		Հորիզոնական, երբ ջերմային հոսքը ուղղված է վերեւից - ներքեւ	
	դրական է	բացասական է	դրական է	բացասական է
0,01	0,13	0,15	0,14	0,15
0,02	0,14	0,15	0,15	0,19
0,03	0,14	0,16	0,16	0,21
0,05	0,14	0,17	0,17	0,22
0,1	0,15	0,18	0,18	0,23
0,15	0,15	0,18	0,19	0,24
0,2-0,3	0,15	0,19	0,19	0,24

Ծ ա ն ո ս ք յ ո յ ն : Օդի շերտին հպվող մեկ կամ երկու մակերեսների վրա ալյումինե փայլարիթեղ փակցնե-լու դեպքում, նրա ջերմային դիմադրությունը պետք է մեծացնել 2 անգամ:

2.6 Եթե R_w եւ R_F ջերմային դիմադրությունների տարբերությունը գերազանցում է 25%, կամ եթե պատող կոնստրուկցիան հարթ չէ, կամ նրա շերտերն ունեն բարդ եզրաձևեր, ապա ջերմափոխանցման բերված դիմադրությունը պետք է որոշել կոնստրուկցիայի ջերմաստճանային դաշտի հաշվարկի հիման վրա:

2.7 Անհամաստեղ շերտերով տարածված տիպերի բազմաշերտ պատող կոնստրուկցիաների համար թույլատրվում է ջերմափոխանցման ջերմային դիմադրությունը որոշել հետևյալ բանաձևով՝

$$R_0 = R_0^{պայմ} \cdot r \quad (6)$$

որտեղ՝ $R_0^{պայմ}$ - կոնստրուկցիայի հիմնական դաշտի ջերմային դիմադրությունն է՝ պայմանականորեն որոշված (1) եւ (2) բանաձևերով,

r - պատող կոնստրուկցիայի ջերմատեխնիկական համաստեղության գործակիցն է, որի արժեքը, որոշված հավելված 4-ից, չպետք է գերազանցի 1-ը: 5-ում բերված մեծություններն:

Աղյուսակ 5

Պատող կոնստրուկցիան	Ջերմատեխնիկական համաստեղության գործակիցը՝ r
1 Թերեւ բետոնից՝ (խտությունը $\gamma_0 \leq 1600 \text{ կգ/մ}^3$)	0,75
2 Էֆեկտիվ ջերմամեկուսիչով եւ ձկուն կապերով երկաթբետոնյա եռաշերտ՝ ա) երբ բետոնի խտությունը $\gamma_0 \leq 2000 \text{ կգ/մ}^3$ բ) երբ բետոնի խտությունը $\gamma_0 > 2000 \text{ կգ/մ}^3$	0,75 0,70
3 Էֆեկտիվ ջերմամեկուսիչով եւ երկաթբետոնյա կապերով կամ բեթոնաբետոն կողերով երկաթբետոնյա եռաշերտ	0,65
4 Էֆեկտիվ ջերմամեկուսիչով եւ երկաթբետոնյա կողերով՝ երկաթբետոնյա, եռաշերտ	0,60

2.8 Լուսային բացվածքների (լուսամուտների, պատշգամբների դռների, երդիկների) ջերմափոխանցման դիմադրությունները որոշվում են ըստ հավելված 5-ի:

2.9 Պատող կոնստրուկցիայի տնտեսապես շահավետ ջերմափոխանցման դիմադրությունը՝ $R_0^{տնտ}$, $m^2 \cdot ^\circ C / \text{վտ}$, որոշվում է հաշվարկով:

Թույլատրվում է տնտեսապես շահավետ ջերմափոխանցման դիմադրության մեծությունը՝ $R_0^{տնտ}$, որոշել աղ. 6-ից:

2.10 Պատող կոնստրուկցիաների (բացառությամբ լուսային բացվածքների) սանիդիգինիկ պահանջներին համապատասխանող ջերմափոխանցման դիմադրությունը՝ $R_0^{սան}$, $m^2 \cdot ^\circ C / \text{վտ}$, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_0^{սան} = \frac{n(t_a - t_n)}{\Delta t^6 \alpha_6} \quad (7)$$

որտեղ՝ n - գործակից է, կախված դրսի օդի նկատմամբ պատող կոնստրուկցիայի արտաքին մակերեսների գրաված դիրքից, որը որոշվում է աղ. 7-ից,

- $t_{\text{ն}}$ - ներսի օդի նորմավորված ջերմաստիճանն է $^{\circ}\text{C}$, որը որոշվում է համաձայն համապատասխան շենքերի մասնագծման նորմերի:
- $t_{\text{կ}}$ - դրսի օդի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանն է $^{\circ}\text{C}$, որը ընդունվում է հավասար ամենացուրտ հնգօրյակի միջին ջերմաստիճանին՝ 0,92 ապահովվածությամբ,
- $\Delta t^{\text{ն}}$ - ներսի օդի և պատող կոնստրուկցիայի մերքին մակերեսային ջերմաստիճանների նորմավորվող տարբերությունն է $^{\circ}\text{C}$, որը որոշվում է աղ. 8-ից,
- $\alpha_{\text{ն}}$ - նույնն է, ինչ (1) բանաձևում:

Աղյուսակ 6

*20 1999 թ. ջերմեօճառ սրահ N02 (այլ դրամաշուկա)
C 01.02.2001 թ. ջերմեօճառ սրահ N12*

Շենքեր և սենքեր	Կրսի օդի հաշվարկային ջերմաստիճանը $t_{\text{ն}}$, $^{\circ}\text{C}$	Պատող կոնստրուկցիայի տնտեսական շահավետ ջերմափոխանցման դիմադրությունը $R_0^{\text{տնտ}}$, $\text{մ}^2 \cdot ^{\circ}\text{C}/\text{Ատ}$				
		Պատեր		Վերնածածկեր և դրսի օդից մեկուսացնող ծածկեր	Լուսամուտներ և պատշգամբների դռներ	Երդիկներ
		քարե և քերտաքանոն	բազմաշերտ			
1. Բնակելի, բուժ-պրոֆիլակտիկ և մանկական հաստատություններ, դպրոցներ, գիշերօթիկներ	+0	1,0	1,4	2,0	0,39	0,48
	-10	1,6	2,1	3,0	0,42	0,48
	-20	2,2	2,8	4,0	0,55	0,48
	-30	2,8	3,5	5,0	0,55	0,48
2. Հասարակական (բացի վերը նշվածներից), ինչպես նաև խոնավ և քաց ռեժիմով արտադրական և այլ սենքեր	+0	0,9	1,1	1,5	0,39	0,48
	-10	1,4	1,7	2,2	0,42	0,48
	-20	2,0	2,4	3,0	0,55	0,48
	-30	2,5	3,0	3,7	0,55	0,48
3. Արտադրական չոր և նորմալ ռեժիմով	+0	0,65	0,7	1,2	0,31	0,48
	-10	0,85	1,0	1,7	0,31	0,48
	-20	1,0	1,4	2,3	0,34	0,48
	-30	1,5	1,7	3,0	0,34	0,48

Ծ ա ն ք ո թ յ ո ճ : $R_0^{\text{տնտ}}$ - ի միջանկյալ արժեքները որոշվում են միջինացմամբ:

2.11 Գարպասների և դռների (բացի պատշգամբների) ջերմափոխանցման դիմադրությունը R_0 , չպետք է փոքր լինի պատերի համար (7) բանաձևով որոշված սանհիգիենիկ պահանջներին համապատասխանող դիմադրության 0,6 մասից:

Լուսամուտների, պատշգամբների դռների և երդիկների սանհիգիենիկ պահանջներից որոշվող ջերմափոխանցման դիմադրությունը $R_0^{\text{տնտ}}$, ընդունել հավասար տնտեսական շահավետ ջերմափոխանցման դիմադրությանը $R_0^{\text{տնտ}}$, ըստ աղ. 6-ի:

2.12 Ջերմահաղորդիչ ներառում պարունակող տեղամասեր համարվում են պատող կոնստրուկցիայի այն մասերը, որոնց ջերմափոխանցման դիմադրությունը փոքր է կոնստրուկցիայի հիմնական դաշտի ջերմափոխանցման դիմադրությունից: Միեւնույն ժամանակ նրանց մերքին մակերեսային գոմարային մակերեսը չպետք է գերազանցի կոնստրուկցիայի ընդհանուր մակերեսի 25%-ը, իսկ

$\frac{a}{\delta} \leq 2$ կամ $\frac{\lambda_2}{\delta \lambda} \leq 150$ (մետաղական ներառումների համար), որտեղ a , δ , λ , և λ_2 բերված են հավելված 6-ում:

2.13 Պատող կոնստրուկցիայի ջերմահաղորդիչ ներառում պարունակող տեղամասի ջերմափոխանցման դիմադրությունը որոշվում է պայմանից, որ կոնստրուկցիայի մերքին մակերեսային ջերմաստիճանը ցածր չլինի ներսի օդի ցողի կետի ջերմաստիճանից $t_{\text{ց}}$, $^{\circ}\text{C}$ (նույնն է ինչ աղ. 8-ում):

Պատող կոնստրուկցիայի մերքին մակերեսային ջերմաստիճանը ջերմահաղորդիչ ներառում պարունակող տեղամասում որոշվում է ջերմաստիճանային դաշտի հաշվարկի հիման վրա:

2.14 Հավելված 6-ում բերված ջերմահաղոր-

դիչ ներառումների դեպքում կոնստրուկցիայի մերքին մակերեսային ջերմաստիճանը $t_{\text{ն}}$, $^{\circ}\text{C}$, թույլատրվում է որոշել հետևյալ բանաձևով՝

ոչ մետաղական ջերմահաղորդիչ ներառումների համար՝

$$t'_{\text{ն}} = t_{\text{ն}} - \frac{n(t_{\text{ն}} - t_{\text{դ}})}{R_0^{\text{պայմ}} \alpha_{\text{ն}}} \left[1 + \eta \left(\frac{R_0^{\text{պայմ}}}{R_0'} - 1 \right) \right], \quad (8)$$

մետաղական ջերմահաղորդիչ ներառումների համար՝

$$t'_{\text{ն}} = t_{\text{ն}} - \frac{n(t_{\text{ն}} - t_{\text{դ}})}{R_0^{\text{պայմ}} \alpha_{\text{ն}}} (1 + \xi R_0^{\text{պայմ}} \alpha_{\text{ն}}), \quad (8\text{ա})$$

որտեղ՝

n , $t_{\text{ն}}$, $t_{\text{դ}}$, $\alpha_{\text{ն}}$ - նույնն է, ինչ (7) բանաձևում,
 $R_0^{\text{պայմ}}$, R_0' - ջերմահաղորդիչ միացումների տեղերում և կոնստրուկցիայի հիմնա-

կան դաշտի պատող կոնստրուկցիայի ջերմաստիճանային դիսպարիտություններն են, որոնք որոշվում են (1) բանաձևով

η, ξ - գործակիցներ են, որոնք որոշվում են հավելված 6-ի 1 և 2 աղյուսակներից:

Աղյուսակ 7

Պատող կոնստրուկցիա	n գործակիցը
1 Արտաքին պատեր և կտուրներ (այդ թվում դրսի օդով օդափոխվող), ձեղնահարկային ծածկեր (հատուկի նյութերից տանիքներով) և անցումների վրայի ծածկեր	1
2 Դրսի օդի հետ հատուկակցվող սառը նկուղների ծածկեր, ձեղնահարկային ծածկեր (գլանափաթեթային նյութերից տանիքներով)	0,9
3 Լուսային բացվածքներ ունեցող պատերով չջեռուցվող նկուղների ծածկեր	0,75
4 Գետնի մակարդակից վերև տեղադրված և լուսային բացվածքներ չունեցող պատերով չջեռուցվող նկուղների ծածկեր	0,6
5 Գետնի մակարդակից ցածր տեղադրված տեխնիկական ներքնահարկերի ծածկեր	0,4

Ծ ա ն ո թ ո թ յ ու ն: Ներքին պատող կոնստրուկցիաների համար (7) բանաձևում ընդունվում է $n=1$, իսկ η, ξ սառը սենյի օդի ջերմաստիճանը:

Աղյուսակ 8

Օճեր և սենյեր	Նորմավորված ջերմաստիճանային տարբերությունը $\Delta t^{\circ}\text{C}$		
	պատ	առաստաղ	հատակ
1 Բնակելի, բուժ-պրոֆիլակտիկ և մանկական հաստատություններ, գիշերօթիկներ	4,0	3,0	2,0
2 Հասարակական, բացի վերը նշվածներից	4,5	4,0	2,5
3 Արտադրական չոր և նորմալ ռեժիմով	$t_{\text{գ}}-t_{\text{թ}}$ բայց, ոչ փոքր 7-ից	0,8 ($t_{\text{գ}}-t_{\text{թ}}$) բայց, ոչ փոքր 6-ից	2,5
4 Խոնավ և բաց ռեժիմով արտադրական և այլն շինություններ	0,8($t_{\text{գ}}-t_{\text{թ}}$)	0,8($t_{\text{գ}}-t_{\text{թ}}$)	2,5

Ծ ա ն ո թ ո թ յ ու ն: $t_{\text{գ}}$ - նույնն է ինչ (8) բանաձևում, $t_{\text{թ}}$ - ներսի օդի նորմավորված ջերմաստիճանին և հարաբերական խոնավությանը համապատասխանող ցողկետի ջերմաստիճանն է:

3 ՊԱՏՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՋԵՐՄԱՎԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Այն շրջաններում, որտեղ հուլիս ամսվա ջերմաստիճանը 21°C և բարձր է, բնակելի, հասարակական և նորմավորված ջերմաստիճանով արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների (պատերի և ծածկերի) ջերմակայունությունը պետք է ապահովի կոնստրուկցիայի ներքին մակերեսային ջերմաստիճանի օրական տատանման էքստրեմալ արժեքների սահմանափակումը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող սահմաններում:

3.2 180-ից մինչև 300° կողմնորոշում ունեցող արտաքին պատերի ջերմակայունությունը համարվում է բավարար, եթե D ջերմային իներցիան մեծ է 4-ից, կամ 20 մմ-ից ոչ պակաս հաստությամբ և 3 մ-ից ոչ ավել բարձրությամբ օդափոխվող օդային միջնաշերտով արեապաշտպան էկրանի առկայության դեպքում: Նշված միջակայքից դուրս գրանցվող կողմնորոշումների դեպքում արտաքին պատերի ջերմակայունությունը չի նորմավորվում:

Կտուրների ջերմակայունությունը համարվում է բավարար, եթե նրանց D ջերմային իներցիան մեծ է 5-ից, կամ 400 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ օդափոխվող ձեղնահարկի առկայության դեպքում:

3.3 Կոնստրուկցիայի ջերմային իներցիան D, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$D = D_1 + D_2 + \dots + D_n \quad (9)$$

որտեղ D_1, D_2, \dots, D_n - կոնստրուկցիայի առանձին շերտերի ջերմային իներցիաներն են, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով

$$D = R \cdot s \quad (10)$$

R - նույնն է, ինչ (3) բանաձևում
s - կոնստրուկցիայի առանձին շերտի նյութի ջերմալուսանցման գործակիցն է, $\text{վտ}/(\text{մ}^2 \cdot ^{\circ}\text{C})$ որոշված հավելված 3-ից:

Ծ ա ն ո թ ո թ յ ու ն: Օդային միջնաշերտի ջերմային իներցիան ընդունվում է հավասար 0-ի:

3.4 Այն շրջաններում, որտեղ հուլիս ամսվա միջին ջերմաստիճանը 21°C և բարձր է, բնակելի, հասարակական և նորմավորված ջերմաստիճանով արտադրական շենքերի սենյերը գերազանցաբար պաշտպանվում են համար, 45° -ից մինչև 315° կողմնորոշում ունեցող, լուսային բացվածքները պետք է օժտված լինեն արեապաշտպան սարքերով: Արեապաշտպան սարքի կոնստրուկցիան պետք է լինի այնպես, որ հնարավոր լինի նրա կարգավորումը ներսից և ապահովի արեալի ճառագայթման անարգել անցումը տարվա ցուրտ ժամանակահատվածում:

Արեապաշտպան սարքի ջերմաբողման գործակիցը՝ β (սարքի առկայության դեպքում լուսային բացվածքով անցած ջերմաքանակի հարաբերությունը նույն բացվածքով անցած ջերմաքանակին՝ սարքի բացակայության դեպքում) չպետք է գերազանցի աղ. 9-ում բերված նորմատիվ մեծությունը:

3.5 Տարածված տիպերի արեապաշտպան

սարքերի ջերմաստիճանային գործակիցները որոշվում են հավելված 7-ից:

Հավելված 7-ում չբերված արեալապաշտպան սարքերի ջերմաստիճանային գործակիցները պետք է որոշել փորձնական ճանապարհով:

Աղյուսակ 9

Շենքեր	Արեալապաշտպան սարքի ջերմաստիճանային գործակցի նորմատիվ մեծությունը, β^a
1 Բնակելի և հասարակական	0,2
2 Արտադրական՝ ներսի օդի նորմատիվում ջերմաստիճանով	0,4

3.6 45-ից մինչև 315° միջակայքից դուրս գտնվող կողմնորոշմամբ լուսային բացվածքների արեալապաշտպան սարքերը չեն նորմատիվում:

4 ՀԱՏԱԿՆԵՐԻ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՉԵՐՄԱՅՈՒՐԱՑՈՒՄԸ

4.1 Բնակելի և հասարակական, ինչպես նաև մշտական բանվորական տեղերով շեռուցվող արտադրական շենքերի հատակների ջերմայուրացման ցուցանիշը՝ Y_h , $\text{Վտ}/(\text{մ}^2 \cdot \text{°C})$, չպետք է գերազանցի աղ. 10-ում բերված նորմատիվ մեծությունը:

4.2 Հատակի մակերեսային ջերմայուրացման ցուցանիշը՝ Y_h , $\text{Վտ}/(\text{մ}^2 \cdot \text{°C})$, որոշվում է հետևյալ կերպ՝

ա) եթե հատակի ծածկույթի (հատակի կոնստրուկցիայի առաջին շերտի) ջերմային իներցիան՝

$$D_1 = R_1 S_1 > 0,5, \text{ և պահ } Y_h = 2s_1 \quad (11)$$

բ) եթե հատակի կոնստրուկցիայի առաջին n շերտերի ($n \geq 1$) գումարային ջերմային իներցիան $D_1 + D_2 + \dots + D_n < 0,5$, բայց $n + 1$ շերտերի հասարակ $D_1 + D_2 + \dots + D_{n+1} \geq 0,5$, ապա հատակի մակերեսային ջերմայուրացման ցուցանիշը պետք է որոշել աստիճանաբար՝ հաշվելով հատակի կոնստրուկցիայի շերտերի մակերեսային ջերմայուրացման ցուցանիշները, սկսած n -րդ շերտից մինչև առաջինը:

n -րդ շերտի համար՝

$$Y_n = \frac{2R_n s_n^2 + s_{n+1}}{0,5 + R_n s_{n+1}} \quad (12)$$

i -րդ շերտի համար՝ ($i=n-1; n-2; \dots; 1$)

$$Y_i = \frac{4R_i s_i^2 + Y_{i+1}}{1 + R_i Y_{i+1}} \quad (12a)$$

Հատակի մակերեսային ջերմայուրացման ցուցանիշը ընդունվում է հավասար առաջին շերտի ջերմայուրացման ցուցանիշին՝ $Y_h = Y_1$

(11) - (12a) բանաձևերում եւ անհավասարություններում կատարված նշանակումները՝ D_1, D_2, \dots, D_{n+1} - առաջին, երկրորդ, $n+1$ -րդ շերտերի ջերմային իներցիան է, որոշված (10) բանաձևով,

R_i, R_n - i -րդ և n -րդ շերտերի ջերմային դիմադրություններն են, $\text{մ}^2 \cdot \text{°C}/\text{Վտ}$, որոշված (3) բանաձևով,

$s_1, s_2, \dots, s_n, s_{n+1}$ - առաջին, երկրորդ, n -րդ և $n+1$ -րդ շերտերի նյութերի ջերմայուրացման գործակիցներն են,

$\text{Վտ}/(\text{մ}^2 \cdot \text{°C})$, որոնք որոշվում են հավելված 3-ից: Ընդ որում աղ. 10-ի 1 և 2 կետերում նշված շենքերի, սենյակների և առանձին տեղամասերի համար ընդունվում են շահագործման Ա պայմանները,

Y_{i+1} - հատակի կոնստրուկցիայի $i+1$ -րդ շերտի ջերմայուրացման ցուցանիշն է, $\text{Վտ}/(\text{մ}^2 \cdot \text{°C})$:

Աղյուսակ 10

Շենքեր, սենյակներ և առանձին տեղամասեր	Հատակի մակերեսային ջերմայուրացման ցուցանիշի նորմատիվ մեծություն՝ Y_h , $\text{Վտ}/(\text{մ}^2 \cdot \text{°C})$
1 Բնակելի, բուժայրոֆիլակտիկ և մանկական հաստատություններ, դպրոցներ, գիշերօթիկներ	12
2 Հասարակական, բացի վերը նշվածներից, ինչպես նաև արտադրական շենքերի մշտական բանվորական տեղերով շեռուցվող արտադրամասեր, որտեղ կատարվում է քեթա ֆիզիկական աշխատանք (I կարգ)	14
3 Արտադրական շենքերի մշտական բանվորական տեղերով շեռուցվող արտադրամասեր, որտեղ կատարվում է միջին ծանրության ֆիզիկական աշխատանք (II կարգ)	17
Ծ ա ն ո ս ու թ յ ու ն : Հատակի մակերեսային ջերմայուրացման ցուցանիշը չի նորմատիվում՝	
ա) եթե հատակի մակերեսային ջերմաստիճանը բարձր է 23° C-ից,	
բ) արտադրական շենքերի շեռուցվող արտադրամասերում, որտեղ կատարվում է ծանր ֆիզիկական աշխատանք (III կարգ),	
գ) եթե արտադրական շենքերի մշտական աշխատատեղերում հատակի վրա փռված են փայտե վահանակներ կամ ջերմամեկուսիչ ծածկույթներ,	
դ) հասարակական շենքերի այն սենյակներում, որոնց շահագործումը պայմանավորված չէ մարդկանց մշտական ներկայությամբ (բանագրասենների և ցուցահանդեսների սրահներ, քաղաքային ճանապարհներ, ծխարաններ և այլն):	

5 ՊԱՏՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՕՂԱԹՎՓԱՆՅՄԱՆ ԳԻՍԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պատող կոնստրուկցիաների օղաբա-
փանցման $R_{\text{օղ}}$ դիմադրությունը, բացառությամբ լու-
սային բացվածքների (լուսամուտներ, պատշգամբ-
ների դռներ, երդիկներ) պետք է փոքր չլինի պա-
հանջվող օղաբափանցման դիմադրությունից՝ $R_{\text{օղ}}^{\text{պ}}$,
 $\text{մ}^2 \cdot \text{ժ} \cdot \text{Պա/կգ}$, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_{\text{օղ}}^{\text{պ}} = \frac{\Delta p}{G^{\text{պ}}} \quad (13)$$

որտեղ Δp - օղի ճնշումների տարբերությունն է, Պա,
պատող կոնստրուկցիայի արտաքին եւ
ներքին մակերեսային վրա եւ որոշ-
վում է համաձայն 5.2-ի:

$G^{\text{պ}}$ - պատող կոնստրուկցիայի նորմատիվ
օղաբափանցելիությունն է, կգ/($\text{մ}^2 \cdot \text{ժ}$), եւ
որոշվում է համաձայն 5.3-ի

Կրսի ստոր օղի երկայնակաւ խիտրացիան
սահմանափակելու համար պատող կոնստրուկցիա-
յի արտաքին մասի, որը միաշերտ (համասեռ)
կոնստրուկցիաների համար ընդունվում է հավասար
ընդհանուր հաստության 1/4-ին, իսկ բազմաշերտ
կոնստրուկցիաների համար ընդգրկում է շերտամե-
կուսիչի եւ կոնստրուկցիայի արտաքին մակերեսայ-
նի միջեւ ընկած շերտերը (շերտը), օղաբափանցման
դիմադրությունը պետք է փոքր չլինի պահանջվող
օղաբափանցման դիմադրության կեսից:

5.2 Օղի ճնշումների տարբերությունը պա-
տող կոնստրուկցիայի արտաքին եւ ներքին մակե-
րեսային վրա՝ Δp , Պա, որոշվում է հետևյալ բա-
նաձևով՝

$$\Delta p = 0,55H(\gamma_n - \gamma_a) + 0,03\gamma_n v^2, \quad (14)$$

որտեղ՝ H - շենքի բարձրությունն է (գետնի մակե-
րեսայից մինչեւ քիվի վերեւի նիշը), մ,
 γ_n, γ_a - դրսի եւ ներսի օղի տեսակարար կշիռ-
ներն են, Ն/մ³ որոշված հետևյալ բա-
նաձևից՝

$$\gamma = \frac{3463}{273 + t} \quad (15)$$

որտեղ՝ t - օղի ջերմաստիճանն է, °C, որը γ_a -ի
որոշման ժամանակ ընդունվում է հա-
վասար ներսի օղի նորմատիված ջեր-
մաստիճանին, իսկ γ_n -ի որոշման ժամա-
նակ՝ ամենացուրտ հնգօրյակի միջին
ջերմաստիճանին:

v - տարբեր ուղղություններով փչող եւ 16%
եւ ավելի հաճախակետություն ունեցող
քամիների միջին արագություններից
առավելագույնն է, մ/վ: Տիպային մա-
խազմման ժամանակ ընդունվում է
5 մ/վ:

5.3 Պատող կոնստրուկցիաների նորմատիվ
օղաբափանցելիությունը՝ $G^{\text{պ}}$, կգ/($\text{մ}^2 \cdot \text{ժ}$), որոշվում է
աղ. 11-ից:

5.4 Բազմաշերտ պատող կոնստրուկցիայի
օղաբափանցման դիմադրությունը որոշվում է որպես
առանձին շերտերի օղաբափանցման դիմադրու-
թյունների գումար՝

$$R_{\text{օղ}} = R_{\text{օղ}_1} + R_{\text{օղ}_2} + \dots + R_{\text{օղ}_n}, \quad (16)$$

որտեղ՝ $R_{\text{օղ}_1}, R_{\text{օղ}_2}, \dots, R_{\text{օղ}_n}$ - առանձին շերտերի օղա-

բափանցման դիմադրու-
թյուններն են, $\text{մ}^2 \cdot \text{ժ} \cdot \text{Պա/կգ}$,
եւ որոշվում են հավելված
8-ից:

Մ ա ն ո թ ո թ յ ո ն : Օղափոխվող օղային
միջուկներով պատող կոնստրուկցիաների (պատեր,
կտորներ) օղի շերտի եւ կոնստրուկցիայի արտաքին մա-
կերեսային միջեւ ընկած շերտերի (շերտի) օղաբափանց-
ման դիմադրությունը հաշվի չառնել:

5.5 Բնակելի եւ հասարակական շենքերի
լուսամուտների եւ պատշգամբների դռների, ինչպես
նաեւ արտադրական շենքերի լուսամուտների եւ
երդիկների օղաբափանցման դիմադրությունը պետք
է փոքր չլինի օղաբափանցման պահանջվող դիմա-
դրությունից՝ $R_{\text{օղ}}^{\text{պ}}$, $\text{մ}^2 \cdot \text{ժ} \cdot \text{Պա/կգ}$, որը որոշվում է հե-
տևյալ բանաձևով՝

$$R_{\text{օղ}}^{\text{պ}} = \frac{1}{G^{\text{պ}}} \left(\frac{\Delta p}{\Delta p_0} \right)^{2/3}, \quad (17)$$

որտեղ $G^{\text{պ}}$ - նույնն է ինչ (13) բանաձևում,

Δp - նույնն է ինչ (14) բանաձևում,

$\Delta p_0 = 10$ Պա - օղի ճնշումների տարբերությունն է,
որի դեպքում որոշվում է օղաբա-
փանցման $R_{\text{օղ}}^{\text{պ}}$ դիմադրությունը:

Աղյուսակ 11

Պատող կոնստրուկցիա	Նորմատիվ օղաբափանց- ելիությունը՝ $G^{\text{պ}}$, կգ/($\text{մ}^2 \cdot \text{ժ}$)
1 Բնակելի եւ հասարակական շենքերի արտաքին պատեր, կտորներ եւ ծածկեր	0,5
2 Արտադրական շենքերի ար- տաքին պատեր, կտորներ եւ ծածկեր	1,0
3 Բնակարանների սուտքի դռներ	1,5
4 Բնակելի եւ հասարակական շենքերի լուսամուտներ եւ պատշգամբների դռներ	6,0
5 Արտադրական շենքերի լու- սամուտներ, դռներ եւ դար- պասներ	8,0
6 Արտադրական շենքերի եր- դիկներ	10,0

Մ ա ն ո թ ո թ յ ո ն : Բնակելի եւ հասարակական
շենքերի պատի պանելների կցվանքների օղաբափանց-
ելիությունը չպետք է գերազանցի 0,5 կգ/($\text{մ}^2 \cdot \text{ժ}$), իսկ
արտադրական շենքերի համար՝ 1 կգ/($\text{մ}^2 \cdot \text{ժ}$):

5.6 Լուսային բացվածքների (լուսամուտնե-
րի, պատշգամբների դռների, երդիկների) օղաբա-
փանցման դիմադրությունը որոշվում է հավելված
9-ից:

6 ՊԱՏՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԳՈՒԼՈՐՇԱԹՎՓԱՆՅՄԱՆ ԳԻՍԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Պատող կոնստրուկցիայի գույրշաբա-

փանցման դիմադրությունը R_q , մ²·ժ·Պա/մգ, (ներքին մակերեսային մինչև կոնդենսացման հնարավոր հարթությունը) պետք է փոքր չլինի հետևյալ պահանջվող գոլորշաքափանցման դիմադրությունների մեծագույն արժեքից՝

ա) գոլորշաքափանցման պահանջվող $R_{q1}^{պ}$,

մ²·ժ·Պա/մգ, դիմադրությունը, որը որոշվում է տարվա ընթացքում պատող կոնստրուկցիայում խոնավություն չկուտակվելու պայմանից՝

$$R_{q1}^{պ} = \frac{(c_u - E)R_{q,w}}{E - c_n} \quad (18)$$

բ) գոլորշաքափանցման պահանջվող $R_{q2}^{պ}$,

մ²·ժ·Պա/մգ, դիմադրությունը, որը որոշվում է տարվա ցուրտ ժամանակահատվածում (կրթ ամսական միջին ջերմաստիճանները բացատական են) պատող կոնստրուկցիայի խոնավացման սահմանափակման պայմանից՝

$$R_{q2}^{պ} = \frac{0,0024z_0(c_u - E_0)}{\gamma_w \delta_w \Delta w_{վթ} + \eta} \quad (19)$$

(18) եւ (19) բանաձեւերում՝

c_u - ներսի օդի ջրային գոլորշու պարցիալ ճնշումն է, Պա, կախված օդի հաշվարկային ջերմաստիճանից եւ խոնավությունից,

$R_{q,w}$ - պատող կոնստրուկցիայի արտաքին մակերեսային մինչև կոնդենսացման հնարավոր հարթությունը ընկած մասի գոլորշաքափանցման դիմադրությունն է, որը որոշվում է 6.2-ի համաձայն,

c_n - դրսի օդի ջրային գոլորշիների միջին տարեկան պարցիալ ճնշումն է, Պա,

z_0 - խոնավակուտակման ժամանակաշրջանի տևողությունն է, օրերով (ընդունվում է հավասար ամսական միջին բացատական ջերմաստիճաններով ժամանակաշրջանի տևողությանը),

E_0 - ջրային գոլորշիների հագեցման ճնշումն է, Պա, կոնդենսացման հնարավոր հարթությունում, խոնավակուտակման ժամանակաշրջանում (որոշվում է ըստ միջին ջերմաստիճանի),

γ_w - խոնավացող շերտի նյութի խտությունն է, կգ/մ³, եւ ընդունվում է հավասար γ_0 -ին (հավելված 3),

δ_w - խոնավացող շերտի հաստությունն է, մ: Միաշերտ պատող կոնստրուկցիաների համար ընդունվում է հավասար կոնստրուկցիայի ընդհանուր հաստության 2/3-ին, իսկ բազմաշերտ պատող կոնստրուկցիաների համար՝ ջերմամեկուսիչ շերտի հաստությունը,

$\Delta w_{վթ}$ - խոնավակուտակման ժամանակաշրջանում խոնավացող շերտի նյութի հարաբերական զանգվածային խոնավության բոլորարկի աճն է, %, որը որոշվում է աղ. 12-ից,

E - կոնդենսացման հնարավոր հարթությունում ջրային գոլորշիների միջին տարեկան հագեցման ճնշումն է, Պա, որը որոշվում է հետևյալ բանաձեւով՝

$$E = \frac{1}{12}(E_1 z_1 + E_2 z_2 + E_3 z_3) \quad (20)$$

որտեղ՝

E_1, E_2, E_3 - ջրային գոլորշիների հագեցման ճնշումն է, Պա, ըստ կոնդենսացման հնարավոր հարթության ջերմաստիճանի, որոշված գարնանա-աշնանային եւ ժամանակաշրջանների միջին ջերմաստիճանների դեպքում,

ձմռան, ամռան

z_1, z_2, z_3 - ձմռան, գարնանա-աշնանային եւ ամռան ժամանակաշրջանի տևողություններն են ամիսներով, հաշվի առնելով հետևյալ պայմանները՝

ա) ձմռան ժամանակաշրջանին վերաբերվում են այն ամիսները, որոնցում օդի միջին ջերմաստիճանը ցածր է -5° C-ից,

բ) գարնանա-աշնանային ժամանակաշրջանին վերաբերվում են այն ամիսները, որոնց միջին ջերմաստիճանները գտնվում են -5° C-ից մինչև +5° C միջակայքում,

գ) ամռան ժամանակաշրջանին վերաբերվում են այն ամիսները, որոնց միջին ջերմաստիճանները բարձր են +5° C-ից,

դ - գործակից է, որը որոշվում է հետևյալ բանաձեւով՝

$$\eta = \frac{0,0024(E_0 - c_{n0})z_0}{R_{q,w}} \quad (21)$$

որտեղ՝ c_{n0} - դրսի օդի ջրային գոլորշիների պարցիալ ճնշումն է, Պա, խոնավակուտակման

ժամանակաշրջանում:

Օ ա ն ո ս ր ո ս յ ո ն ն է ր:

1 Ազդեակ միջավայրով սենյերի կոնստրուկցիաների հասար E_1, E_2, E_3, E_0 առավելագույն առաձգականությունները պետք է ընդունել հաշվի առնելով միջավայրի ազդեակությունը:

2 E_3 ճնշումը որոշելիս կոնդենսացման հնարավոր հարթության ջերմաստիճանը բոլոր դեպքերում պետք է ընդունել ոչ պակաս դրսի օդի ամռան ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանից, իսկ ներսի օդի ջրային գոլորշիների պարցիալ ճնշումը՝ c_n , ոչ պակաս տվյալ ժամանակաշրջանում դրսի օդի ջրային գոլորշիների միջին պարցիալ ճնշումից:

3 Միաշերտ (համասեռ) պատող կոնստրուկցիաների համար կոնդենսացման հնարավոր հարթությունը գտնվում է նրա ներքին մակերեսային կոնստրուկցիայի հաստության 2/3-ի չափ հեռավորության վրա, իսկ բազմաշերտ կոնստրուկցիաների համար՝ հասնակնում է ջերմամեկուսիչ շերտի արտաքին մակերեսային հետ:

6.2 Միաշերտ պատող կոնստրուկցիայի, կամ բազմաշերտ կոնստրուկցիայի որտեղ շերտի գոլորշաքափանցման դիմադրությունը R_q , մ²·ժ·Պա/մգ, որոշվում է հետևյալ բանաձեւով՝

$$R_q = \frac{\delta}{\mu} \quad (22)$$

որտեղ՝ δ - պատող կոնստրուկցիայի շերտի հաստությունն է, մ,

μ - շերտի նյութի գոլորշաքափանցելիության գործակիցն է, մգ/(մ·ժ·Պա), որը որոշվում է հավելված 3-ից:

Բազմաշերտ պատող կոնստրուկցիայի (կամ նրա մի մասի) գոլորշաքափանցման դիմա-

Պատող կոնստրուկցիայի նյութը	Չանգվածային հարաբերական խոնավության բույլատրելի սճր՝ Δw սյթ, %
1 Բազալտե քարերով "Մոլիս" տիպի, կավե աղյուսով եւ կերամիկական բլոկներով շարվածքներ	1,5
2 Տուֆե քարերով շարվածքներ	2,5
3 Սիլիկատային աղյուսով շարվածքներ	2,0
4 Ծակոտկեն լցանյութերով քեթե բետոններ (կերամիկատաբետոն, տուֆաբետոն, խարամաբետոն եւ այլն)	5,0
5 Բջջաբետոններ (գազաբետոն, փրփրաբետոն, գազասիլիկատ եւ այլն)	6,0
6 Փրփրագազասպակի	1,5
7 Ֆիբրոլիտ ցեմենտային	7,5
8 Հանքային սպեր եւ ներքնակներ	3,0
9 Փրփրապոլիստիլոլ եւ փրփրապոլիուրեթան	25,0
10 Ջերմամեկուսիչ լիցքեր՝ հրաբլիսային խարամից եւ պեմզայից	3,0
11 Ծանր բետոններ	2,0

դրույթունը որոշվում է որպես առանձին շերտերի գոլորշարափանցման դիմադրությունների գումար:
Թիթեղային նյութերի եւ գոլորշամեկուսիչ բարակ շերտերի գոլորշարափանցման դիմադրությունը որոշվում է հավելված 10-ից:

Ծ ա ն ո ր ք յ ո ն ն ք :

1. Անկախ դիրքից եւ հաստությունից օդային միջնաշերտի գոլորշարափանցման դիմադրությունը հավասար է 0-ի:

2. Պատող կոնստրուկցիաների պահանջվող գոլորշարափանցման դիմադրությունը՝ $R_{\sigma}^{պ}$, ապահովելու համար, կոնստրուկցիայի R_{σ} գոլորշարափանցման դիմադրությունը որոշվում է ներքին մակերեսից մինչեւ կոնդենսացման հնարավոր հարթությունը:

3. Խոնավ կամ թաց ռեժիմով սենքերում անհրաժեշտ է նախատեսել պատող կոնստրուկցիաների կցորդումների (բացվածքների եւ պատերի կցման տեղերը եւ այլն) ջերմամեկուսիչ գոլորշամեկուսացում ներսի կողմից:

Կցորդումների գոլորշարափանցման դիմադրությունը ստուգվում է խոնավակուտակման ժամանակաշրջանում խոնավության կուտակման սահմանափակման պայմանից:


6.3 Գոլորշարափանցման դիմադրությունը չի պահանջվում որոշել հետեւյալ պատող կոնստրուկցիաների համար

ա) չոր եւ նորմալ ռեժիմով սենքերի միաշերտ արտաքին պատեր,

բ) չոր եւ նորմալ ռեժիմով սենքերի երկշերտ արտաքին պատեր, որոնց ներքին շերտի գոլորշարափանցման դիմադրությունը մեծ է 1,6 մ²·ժ·Պա/մգ:

6.4 Խոնավ եւ թաց ռեժիմով շենքերի կտուրների ջերմամեկուսիչ շերտի նյութը խոնավացումից պաշտպանելու համար անհրաժեշտ է նախատեսել գոլորշամեկուսիչ շերտ՝ ջերմամեկուսիչից ներքեւ, որը պետք է հաշվի առնել կտուրի գոլորշարափանցման դիմադրությունը ըստ 6.2-ի որոշելիս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԽՈՐԱՎՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ



Պայմանական նշաններ



- Հայաստանի Հանրապետության պետական սահմանները
- - - - - Խոնավության գոտիների սահմանները
- չոր գոտի
- ▣ նորմալ գոտի

ՊԱՏՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԱՍՎԱԾ ՍԵՆՔԵՐԻ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՈՒՇԺԻՍԻՅ ՈՒ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻՑ

Մենքերի խոնավային ռեժիմը (ըստ աղյուսակ 1-ի)	Խոնավության գոտիներում (ըստ հավելված 1-ի) Ա եվ Բ շահագործման պայմանները	
	չոր	նորմալ
Չոր	Ա	Ա
Նորմալ	Ա	Բ
Խոնավ կամ քսց	Բ	Բ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՋԵՐՄԱՏԵՍՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Նյութը	Նյութերի բնութագրերը չոր վիճակում			Նյութի հաշվարկային		Նյութերի հաշվարկային գործակիցները ըստ շահագործման պայմանների (հավելված 2)				
	Խտությունը $\gamma_0, կգ/մ^3$	Տեսակարար ջերմունակությունը $C_0, կՋ/(կգ \cdot ^\circ C)$	Ջերմահաղորդականությունը $\lambda_0, վտ/(մ \cdot ^\circ C)$	հարաբերական զանգվածային խոնավությունը (ըստ շահագործման պայմանների)՝ $w, \%$ (հավելված 2)		ջերմահաղորդականության՝ $\lambda, վտ/(մ \cdot ^\circ C)$		ջերմայունացման՝ $s, վտ/(մ^2 \cdot ^\circ C)$		գոլորշաթափանցելիության՝ $\mu, մգ/(մ \cdot ժ \cdot Պա)$
				Ա	Բ	Ա	Բ	Ա	Բ	

1. ԲԵՏՈՆՆԵՐ ԵՎ ՇԱՂԱՍՆԵՐ

Ա. Բնական խիտ լցանյութերով բետոններ

1 Երկաթբետոն	2500	0,84	1,69	2	3	1,92	2,04	17,98	16,95	0,03
2 Բետոններ խճուկ կամ բնական քարե կուպիճներով	2400	0,84	1,51	2	3	1,74	1,86	16,77	17,88	0,03

Բ. Բնական ծակոտկեն լցանյութերով բետոններ

3 Տուֆաբետոն	1800	0,84	0,64	7	10	0,87	0,99	11,38	12,79	0,09
4 -"-	1600	0,84	0,52	7	10	0,70	0,81	9,62	10,91	0,11
5 -"-	1400	0,84	0,41	7	10	0,52	0,58	7,76	8,63	0,11
6 -"-	1200	0,84	0,29	7	10	0,41	0,47	6,38	7,20	0,12
7 Պենզաբետոն	1800	0,84	0,63	4	6	0,85	0,96	9,13	11,2	0,09
8 -"-	1600	0,84	0,52	4	6	0,62	0,68	8,54	9,30	0,075
9 -"-	1400	0,84	0,42	4	6	0,49	0,54	7,10	7,76	0,083
10 -"-	1200	0,84	0,34	4	6	0,40	0,43	5,94	6,41	0,098
11 -"-	1000	0,84	0,26	4	6	0,30	0,34	4,69	5,20	0,11
12 Խարամաբետոն (հրաբլխային խարամներից)	1600	0,84	0,52	7	10	0,64	0,00	9,20	10,14	0,075
13 -"-	1400	0,84	0,41	7	10	0,52	0,58	7,76	8,63	0,083
14 -"-	1200	0,84	0,33	7	10	0,41	0,47	6,38	7,20	0,090
15 -"-	1000	0,84	0,24	7	10	0,29	0,35	4,90	5,67	0,098

Նյութը	Նյութերի բնութագրերը չոր վիճակում			Նյութի հաշվարկային		Նյութերի հաշվարկային գործակիցները ըստ շահագործման պայմանների (հավելված 2)				
	Խտությունը՝ γ_0 , կգ/մ ³	Տեսակարար ջերմունակությունը՝ C_0 , կՋ/(կգ·°C)	Ջերմահաղորդականության գործակիցը՝ λ_0 , Վտ/(մ·°C)	հարաբերական զանգվածային խոնավությունը (ըստ շահագործման պայմանների)՝ w , % (հավելված 2)		ջերմահաղորդականության՝ λ , Վտ/(մ·°C)		ջերմայության՝ S , Վտ/(մ ² ·°C)		գորոշաբախանցելիության՝ μ , մգ/(մ·ժ·Պա)
				Ա	Բ	Ա	Բ	Ա	Բ	Ա, Բ
Գ. Արհեստական ծակոտկեն լցանյութերով բետոններ										
